ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՊՐՆ. ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆԻՆ
«ԳԱՐ-ՇԻՆ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 04452718),
Հասցե՝ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, II թաղ., III շենք, բն. 6
տնօրեն՝ Ա. Պետրոսյանից

**Դ Ի Մ ՈՒ Մ**

Հարգելի՛ պրն. Հ. Սիմիդյան,

Ես՝ Արտակ Պետրոսյանս, հանդիսանալով «ԳԱՐ-ՇԻՆ» ՍՊ ընկերության տնօրեն դիմում եմ Ձեզ ներկայացնելու **«15» ապրիլ 2025 թվականին** ստացված **№ ԱՎ/26.1/12134/2025 ծանուցման** իմ գրավոր բացատրությունը:

«ԳԱՐ-ՇԻՆ» ՍՊ ընկերությունը հանդիսանում է ընդերքօգտագործող և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից «30» դեկտեմբեր 2024 թվականին ստացել է օգտակար հանածոների արդյունահանման թույլատվություն, որը տրամադրել է 20 տարի գործողության ժամկետով, այն է՝ **ՇԱԹ-29/758**: Համաձայն **№ ԱՎ/26.1/12134/2025** ծանուցման, տնտեսվարողի կողմից ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը չի ներկայացվել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ հաղորդումն ամփոփ տարեկան հաշվետվության տեսքով:

Ցանակնում եմ տեղեկացնել Ձեզ այն մասին, որ «ԳԱՐ-ՇԻՆ» ՍՊ ընկերությունը ստացել է վերոհիշյալ թույլատվությունը «30» դեկտեմբեր 2024 թվականին և թույլատվության ստացման օրը, ինչպես նաև ստացման օրվան հաջորդող օրը չի իրականացրել որևէ տնտեսական գործունեություն, մասնավորապես՝ ավազակոպճագլաքարային խառնուրդի, այսուհետ՝ օգտակար հանածոյի, արդյունահանում:

Իրազեկ եմ այն մասին, որ համաձայն **ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի №191-Ն որոշմաման**, պարտավոր եմ պահպանել տարեկան մեկ անգամ մշտադիտարկումների իրականացման պահանջը, որը սակայն չեմ իրականացրել 2024 թվականի արդյունքներով հանքը ֆիզիկապես չշահագործելու պայմանից ելնելով:

Խնդրում եմ Ձեզ «15» ապրիլ 2025 թվականին ստացված № ԱՎ/26.1/12134/2025 ծանուցումը փոխարինել գրավոր նախազգուշացմամբ:

Հայցում եմ Ձեր ներողամտությունը և կանխավ շնորհակալ եմ:

Հարգանքներով՝ ______________________ Ա. Պետրոսյան

**«30» ապրիլ 2025թ.**